Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2018 թվականի դեկտեմբերի 21-ի №747Ա որոշման

«Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002
թվականի նոյեմբերի 1-ի №79Ա որոշմամբ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման №0092 լիցենզիայի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայի իմաստով օգտագործված հիմնական հասկացություններն են՝

1) **Առևտրային կանոններ**՝ Հանձնաժողովի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաների առևտրային կանոններ, որոնք կանոնակարգում են այդ շուկաների մասնակիցների առևտրային փոխհարաբերությունները,

2) **Բաշխման ծառայության սակագներ**՝ Լիցենզավորված անձի կողմից այլ անձանց, այդ թվում երաշխավորված մատակարարի, այլ մատակարարների կամ մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձանց էլեկտրական էներգիան Բաշխման ցանցով Սպառողներին (Բաժանորդներին), այդ թվում որակավորված սպառողներին բաշխելու ծառայության սակագներ, որոնք Հանձնաժողովի կողմից սահմանվում են ելնելով Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքից,

3) **Բաշխման ցանց՝** Լիցենզավորված անձի կողմից կառավարվող և շահագործվող էլեկտրական էներգիայի բաշխման գծերի, ենթակայանների և այլ սարքավորումների միասնական համակարգ, որի միջոցով էլեկտրական էներգիան բաշխվում է Սպառողին,

4) **Լիցենզավորված անձ**՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն,

5) **Խոցելի սպառող՝** բնակիչ բաժանորդ, որը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ստացել է խոցելի սպառողի կարգավիճակ՝ հաշվի առնելով նրա սոցիալապես անապահով լինելու կամ հատուկ կարգավիճակ ունենալու հանգամանքը,

6) **Հաղորդման ցանց**՝ էլեկտրական էներգիայի հաղորդման գծերի, ենթակայանների և այլ սարքավորումների միասնական համակարգ, որի

միջոցով էլեկտրական էներգիան հաղորդվում է բաշխման ցանց և (կամ) սպառողին և (կամ) արտահանվում (ներկրվում) և (կամ) տարանցվում է երրորդ երկիր,

7) **Հաղորդող՝** էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձ,

8) **Համակարգի օպերատոր՝** էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձ,

9) **Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով,

10) **Շուկայի կանոններ՝** Հանձնաժողովի հաստատած էլեկտրաէներգետիկական շուկայի Առևտրային և Ցանցային կանոններ,

11) **Շուկայի օպերատոր՝** էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձ,

12) **Սպառող (Բաժանորդ)՝** էլեկտրական էներգիայի (հզորության) սպառման պահանջարկ ունեցող անձ, որն էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր է կնքել Մատակարարի և (կամ) երաշխավորված մատակարարի հետ կամ գտնվում է այդ գործընթացում,

13) **Տեխնոլոգիական կորուստներ՝** հաշվարկային եղանակներով որոշվող՝ Բաշխման ցանցում առաջացող էլեկտրական էներգիայի անխուսափելի տեխնիկական կորուստների և էլեկտրական էներգիայի հաշվառքի սարքերի սխալանքով պայմանավորված առևտրային կորուստների գումարային մեծություն,

14) **Ցանցային կանոններ՝** Հանձնաժողովի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հաղորդման և բաշխման ցանցային կանոններ, որոնք կանոնակարգում են հաղորդման և բաշխման ցանցերի զարգացման պլանավորման, կառավարման, կարգավարման և այդ ցանցեր մուտքի ապահովման հետ կապված հարաբերությունները:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ (ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ)

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2002 թվականի 30-ից:

3. Լիցենզիան գործում է անժամկետ:

4. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը (գործունեության վայրը) Հայաստանի Հանրապետության տարածքն է:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքում իրականացնել էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման գործունեություն՝ հետևյալ գործառույթներով.

1) էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխում մեծածախ և մանրածախ շուկայի մասնակիցներին, այդ թվում՝ Խոցելի սպառողներին,
2) Բաշխման ցանցի կարգավարում,
3) Բաշխման ցանցի կառուցում (վերակառուցում), բաշխման ցանցի սպասարկում, շահագործում, կառավարում, պահպանում, բարելավում՝ արդյունավետ, տնտեսապես հիմանվորված և համակարգված եղանակով՝ ապահովելու սպառողների անխափան էլեկտրամատակարարումը նվազագույն ծախսումներով երկարաժամկետ կտրվածքում,
4) անձի նոր կամ վերակառուցված սպառման համակարգը կամ կայանը ոչ խտրական պայմաններով բաշխման ցանցին միացում,
5) Բաշխման ցանցին ցանկացած անձի ոչ խտրական մուտքի ապահովում՝ համաձայն Շուկայի կանոնների,
6) էլեկտրական էներգիայի հաշվառում և հաշիվների ներկայացում՝ համաձայն Շուկայի կանոնների,
7) շուկայի կանոններով նախատեսված այլ գործառույթներ:

6. Սույն լիցենզիայի պայմանների 5-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով ամրագրված գործառույթները Լիցենզավորված անձն իրականացնում է բացառիկ իրավունքով:

7. Լիցենզավորված անձին արգելվում է զբաղվել էլեկտրական էներգիայի արտադրության, ինչպես նաև մատակարարման լիցենզավորվող գործունեությամբ (բացառությամբ էլեկտրաէներգիայի երաշխավորված մատակարարման):

8. Լիցենզավորված անձին չի կարող տրվել էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի լիցենզիա:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, սույն լիցենզիայի, Ցանցային կանոնների, Առևտրային կանոնների, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

10. Լիցենզավորված անձը պարտավոր է Շուկայի կանոնների և պայմանագրերի հիման վրա ապահովել Բաշխման ցանցին ցանկացած անձի ոչ խտրական մուտքի իրավունքը, ինչպես նաև Բաշխման ցանցով բաշխել Սպառողի կամ այլ անձանց

էլեկտրական էներգիան՝ Հանձնաժողովի սահմանած բաշխման ծառայությունների մատուցման սակագներով:

11. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել ցանկացած անձի նոր կամ վերակառուցված սպառման համակարգի կամ կայանի ոչ խտրական պայմաններով միացումը Բաշխման ցանցին՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում ընդունված տեխնիկական կանոնակարգերի և Հանձնաժողովի սահմանած միացման կանոնների:

12. Լիցենզավորված անձի և էլեկտրաէներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց, Շուկայի կանոններով նախատեսված դեպքերում նաև Սպառողների միջև կնքված պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին և (կամ) պարտադիր պայմաններին:

13. Լիցենզավորված անձը, համագործակցելով լիցենզիա ունեցող անձանց հետ, մշակում է էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններն ու դրանք ներկայացնում Հանձնաժողովի հաստատմանը:

14. Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով յուրաքանչյուր տարի Հանձնաժողովի համաձայնեցմանն է ներկայացնում առաջիկա առնվազն երեք տարվա ներդրումային ծրագիր՝ հաշվի առնելով բաշխման ցանցային կանոններում վերջինիս ներկայացվող պահանջները, կամ արդեն իսկ ներկայացված ներդրումային ծրագրում փոփոխություններ լինելու դեպքում ներկայացնում է առաջարկվող փոփոխությունները:

15. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքում (գործունեության վայրում) այլ անձանց էլեկտրակայանքների (էլեկտրատեղակայանքների) միջոցով էլեկտրասնուցում ստացող Սպառողների (Բաժանորդների) էլեկտրասնուցումն անմիջապես Բաշխման ցանցից իրականացնելու նպատակով Լիցենզավորված անձն իրավունք ունի իրականացնել այդ նպատակին ուղղված ներդրումային ծրագրեր: Այդ ծրագրերի նպատակահարմարությունը և տնտեսական արդյունավետությունը գնահատվում է Հանձնաժողովի կողմից և դրական որոշման դեպքում դրանք իրականացվում են Հանձնաժողովի հետ համաձայնեցված կարգով, իսկ հիմնավորված և անհրաժեշտ ծախսերը հաշվի են առնվում Բաշխման ծառայության սակագներում:

16. Այն դեպքում, երբ Լիցենզավորված անձը իրականացնում է ներդրումային ծրագիր, որը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով մերժվել է, ապա այդ ծրագրի իրականացման արդյունքում առաջացած ցուցանիշների բարելավումը սակագներ սահմանելիս Հանձնաժողովը հաշվի չի առնի այնքան ժամանակ, մինչև Լիցենզավորված անձը իր ներդրումները հետ ստանա: Եթե Լիցենզավորված անձը որոշում է իր ռիսկով իրականացնել Հանձնաժողովի կողմից մերժված ներդրումային ծրագիրը, ապա նա պարտավոր է այդ մասին տեղյակ պահել Հանձնաժողովին և

Հանձնաժողովի պահանջով վարել տվյալ ծրագրի իրականացման համար առանձնացված հաշվառում:

17. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգներն ու կարգադրությունները, ինչպես նաև համագործակցել Շուկայի օպերատորի հետ՝ Շուկայի կանոններին համապատասխան:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է Շուկայի կանոններին, Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված էներգետիկ օբյեկտների շահագործման և անվտանգության կանոններին ու ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան՝ աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող՝ Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների զննումերին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև աջակցել իր տիրապետման տակ գտնվող՝ այլ անձանց սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների զննման աշխատանքներին:

19. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացված Տեխնոլոգիական կորուստների հաշվարկման մեթոդիկայի վերաբերյալ տարաձայնությունների առկայության դեպքում այն ուղարկվում է փորձաքննության՝ համատեղ ընտրված փորձագիտական ընկերություն կամ առանձին փորձագետների: Նշված սկզբունքով են լուծվում նաև Լիցենզավորված անձի կողմից ներկայացվող Բաշխման ծառայության սակագներում ներառվող Տեխնոլոգիական կորուստների մեծության վերաբերյալ տարաձայնությունները:

20. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող գնումները իրականացվում են համաձայն գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում՝ Հանձնաժողովի կողմից սահմանված լրացուցիչ պահանջների, ինչպես նաև «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջի:

21. Հայաստանի Հանրապետության օրենսդրության, գործող իրավական ակտերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների փոփոխությամբ կամ նորերի հաստատմամբ պայմանավորված՝ Լիցենզավորված անձի հիմնավորված վնասները և(կամ) լրացուցիչ ծախսերը փոխհատուցվում են Սակագնային մարժայով և (կամ) Բաշխման ծառայության սակագներով: Լրացուցիչ ծախսերի և (կամ) վնասների փոխհատուցման ենթակա գումարների վերաբերյալ Լիցենզավորված անձի հետ

տարաձայնություններ ունենալու դեպքում, Հանձնաժողովը, Լիցենզավորված անձի հետ համատեղ, ներգրավում է անկախ փորձագետների:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել Սպառողների (Բաժանորդների) հուսալի էլեկտրամատակարարումը՝ ըստ հետևյալ ցուցանիշների.

1) բոլոր Սպառողների (Բաժանորդների) հոսանքազրկումների միջին հաճախության՝ խմբավորված ըստ հոսանքազրկման պատճառների, որը որոշվում է Սպառողների (Բաժանորդների) տարեկան անջատումների քանակը այդ տարվա ընթացքում սպասարկված Սպառողների (Բաժանորդների) միջին քանակին բաժանելու միջոցով,

2) բոլոր Սպառողների (Բաժանորդների) հոսանքազրկումների միջին տևողության, որը որոշվում է հոսանքազրկումների՝ որպեներով արտահայտված ընդհանուր տևողությունը նշված տարվա ընթացքում սպասարկված Սպառողների (Բաժանորդների) միջին թվին բաժանելու միջոցով,

3) Սպառողների (Բաժանորդների) դիմում-բողոքների և հարցադրումների ընդհանուր քանակի՝ ըստ դրանք հարուցող պատճառների և Սպառողների (Բաժանորդների) խմբերի,

4) թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման և հաճախականության շեղման դեպքերի քանակի և տևողության:

23. Սույն լիցենզիայի 22-րդ կետում նշված ցուցանիշների մեծությունները հաշվարկելիս հաշվի չեն առնվում Ֆորս մաժորով պայմանավորված՝ Սպառողների (Բաժանորդների) հոսանքազրկման և սպասարկման որակի անկման դեպքերը, ինչպես նաև սպասարկման հետ կապված այն դեպքերը, որոնք պայմանավորված չեն Լիցենզավորված անձի գործունեությամբ կամ նրա սեփականությունը չհանդիսացող, կամ նրա կողմից չկառավարվող սարքավորումներով: Նման դեպքերը ենթակա են առանձին հաշվառման Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացվող հաշվետվություններում:

24. Հանձնաժողովն իրավասու է սահմանել սույն լիցենզիայի 22-րդ կետում նշված ցուցանիշների ծրագրային տարեկան մեծություններ:

25. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել շուրջօրյա հեռախոսակապ, որպեսզի Սպառողները կարողանան հաղորդել տեղեկատվություն կամ ստանալ պարզաբանումներ իրենց դիմումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման դադարեցումների, դրանց պատճառների և վերականգնման ժամկետների, , Լիցենզավորված անձի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ:

26. Բաշխման ծառայության սակագները սահմանվում են (հաշվարկվում են) սույն լիցենզիայի պայմանների N1 հավելվածում ամրագրված մեթոդիկայի և Հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի №541Ն որոշմամբ հաստատված մեթոդիկայի համաձայն:

27. Լիցենզավորված անձն իրավունք չունի էլեկտրաէներգետիկական մանրածախ և մեծածախ շուկայի որևէ մասնակցից պահանջել կատարել վճարներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրանց ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Շուկայի կանոններով, պայմանագրով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

28. Լիցենզավորված անձի ղեկավար աշխատողները (տնօրինությունը) պետք է համապատասխանեն Հանձնաժողովի կողմից սահմանված չափորոշիչներին:

29. Լիցենզավորված անձն իրավունք չունի սույն լիցենզիայի պայմանների 5-րդ կետով սահմանված որևէ իրավունք կամ պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարել, զիջել, գրավ դնել, պատվիրակել կամ փոխանցել մեկ այլ անձի՝ բացառությամբ 5-րդ կետի 3-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված գործառույթների, որոնց համար պետք է նախապես ստանա Հանձնաժողովի համաձայնությունը:

30. Սույն լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

31. Սույն լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

32. Լիցենզավորված անձի 25 և ավելի տոկոս բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման, գրավադրման, ինչպես նաև Լիցենզավորված անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի (բաժնետոմսի, փայի)՝ անկախ քանակից, օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է նախապես ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համար Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի սահմանած կարգով նախապես ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը:

34. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի սույն լիցենզիայի պայմանների պատշաճ

կատարումը, իսկ լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

35. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

36. Լիցենզավորված անձը պարտավոր է յուրաքանչյուր տարի իրականացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ և աուդիտորական եզրակացությունն ստանալուց հետո, իսկ տարեկան հաշվետվությունը բաժնետերերի կամ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատվելու դեպքում՝ դրանց հաստատումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական հաշվետվությունների պատճենները ներկայացնել Հանձաժողով, ինչպես նաև հրապարակել իր և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am կայքում:

37. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

38. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն, ինչպես նաև պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

39. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը հրապարակային է, եթե դա Լիցենզավորված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձի ներկայացրած գաղտնապահական տեղեկատվության հետ կապված հարցերը կարգավորվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

40. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են սույն լիցենզիայի պայմանների խախտումների կամ կարող են դառնալ սույն լիցենզիայի պայմանների խախտումների անմիջական պատճառ:

41. Լիցենզավորված անձը պարտավոր է սահմանված կարգով ապահովել լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ և այդ

գործունեության մեջ ներգրավված գույքի մատչելիությունը Հանձնաժողովի ներկայացուցիչների համար:

42. Սույն լիցենզիայից կամավոր հրաժարվելու կամ Լիցենզավորված անձին լիցենզիայից զրկելու դեպքերում սպառողներին էլեկտրական էներգիայի անխափան բաշխումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը, մինչև գործունեության նոր լիցենզիա տալը, իրավունք ունի համապատասխան որոշմամբ պարտադրել լիցենզիայից կամավոր հրաժարված կամ զրկված անձին ժամանակավորապես շարունակել իր գործունեությունը՝ Հանձնաժողովի սահմանած պայմաններին և դրույթներին համապատասխան: Այդ որոշումը չկատարելու դեպքում կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

43. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

44. Սույն լիցենզիայի պայմաններով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

5. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

45. Լիցենզավորված գործունեության վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

46. Լիցենզավորված գործունեության վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք՝ Հանձնաժողովի սահմանած կարգով:

47. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է աջակցի Հանձնաժողովին՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով համապատասխան փաստաթղթեր:

6. ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ

48. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, սույն լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախազգուշացում,

2) օրենքով սահմանված տուգանքներ,

3) լիցենզիայի գործողության կասեցում,

4) լիցենզիայի գործողության դադարեցում:

49. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

50. Լիցենզավորված անձը սույն լիցենզիայի պայմանների 48-րդ կետում նշված խախտումների համար պատասխանատվություն չի կրում, եթե դրանք հետևանք են ֆորս մաժորի:

51. Սույն լիցենզիայի պայմանների իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) Լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝

1) չի գտնվում Լիցենզավորված անձի վերահսկողության ներքո,

2) Լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար,

3) Լիցենզավորված անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

52. Սույն լիցենզիայի պայմանների իմաստով, մասնավորապես, ֆորս մաժոր են՝

1) բնական և տեխնածին աղետները, համաճարակները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), ատոմային, քիմիական կամ կենսաբանական աղտոտում, գործադուլները, հասարակական անկարգությունները,

2) ապստամբությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ներխուժումները, զինված հակամարտությունները, արտաքին թշնամու գործողությունները կամ շրջափակումը, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ներգրավում է այն, ինչը գոյություն չի ունեցել կամ չէր կարող ողջամտորեն կանխատեսվել,

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունը այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, չի երկարաձգվել սույն

լիցենզիայով ամրագրված պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ Լիցենզավորված անձը գործել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

53. Սույն լիցենզիայի պայմանների 52-րդ կետը չի սահմանափակում Լիցենզավորված անձի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ սույն գլխի պահանջներին բավարարելու դեպքում դրանք ևս ֆորս մաժոր ճանաչելու համար:

7. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

54. Սույն լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

55. Հանձնաժողովի նախաձեռնությամբ սույն լիցենզիայի փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության օրենքների և նորմատիվ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար:

56. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15 օրյա ժամկետում լիցենզիայի վերաձևակերպման հայտ ներկայացնել Հանձնաժողով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ա. Արմենակյան 127

(գտնվելու վայրը)

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ

Հավելված №1
Էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման
№0092 լիցենզիայի պայմանների

ՄԵԹՈԴԻԿԱ

Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի և Սակագնային մարժայի հաշվարկման

1. Սակագնային մարժայի հաշվարկման հիմքում դրվում է Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը, որի համաձայն հաշվարկային տարվա (12 ամսյա ժամանակաշրջանի) անհրաժեշտ հասույթը (ԱՀ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ԱՀ = **ԳԷԱ** + **ՇՊԾ** + **Մ** + **ԱԴՊ** + **ԹՇ** + **ՓԳ** - **ԲԾՀ**,

որտեղ՝

ԳԷԱ-ն Լիցենզավորված անձի կողմից գնվող էլեկտրական էներգիայի և ծառայությունների մատուցման արժեքն է (այսուհետ՝ գնվող կամ գնված էլեկտրական էներգիայի արժեք),

ՇՊԾ-ն լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերն են,

Մ-ն լիցենզավորված գործունեության իրականացման համար ներգրավված հիմնական միջոցների մաշվածությունը և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան է,

ԱԴՊ-ն անհուսալի դեբիտորական պարտքերի մեծությունն է,

ԹՇ-ն լիցենզավորված գործունեության իրականացման համար ներգրավված զուտ ակտիվների դիմաց թույլատրելի շահույթի մեծությունն է,

ՓԳ-ն Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի և գնված էլեկտրական էներգիայի արժեքի տարբերության փաստացի և հաշվարկային մեծությունների շեղման արդյունքում ձևավորված փոխհատուցման ենթակա գումարն է,

ԲՇՀ-ն Լիցենզավորված անձի կողմից իրավաբանական անձանց էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցումից ստացված հասույթն է:

2. Լիցենզավորված անձի կողմից գնվող էլեկտրական էներգիայի արժեքը (ԳԷԱ) որոշվում է հետևյալ բանաձևով՝

ԳԷԱ = **ԱԱ**1 + **ԱԱ**2 + **ԻԱԱ** + **ՆԷԱ** + **ՀԱ** + **ՀՕԱ** + **ՇՕԱ**,

որտեղ՝

ԱԱ$_1$-**ը** երկդրույք սակագնային համակարգում աշխատող Արտադրողների կողմից շահագործման պատրաստականության վիճակում պահվող (պայմանագրային) հզորության և առաքվող էլեկտրական էներգիայի արժեքն է (դրամ),

ԱԱ$_2$-**ը** միադրույք սակագնային համակարգում աշխատող Արտադրողների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի արժեքն է (դրամ),

ԻԱԱ-ն *Ինքնավար արտադրողների և Լիցենզավորված անձի միջև իրականացվող էլեկտրական էներգիայի փոխհոսքերի շրջանակում Լիցենզավորված անձի կողմից Ինքնավար արտադրողներին տրամադրվող հատուցման արժեքն է (դրամ),*

ՆԷԱ-ն ներքին շուկայի սպառողներին վաճառելու նպատակով Ներկրողներից գնվող և Լիցենզավորված անձի կողմից ներկրվող էլեկտրական էներգիայի արժեքն է (դրամ),

ՀԱ-ն Հաղորդողի կողմից Լիցենզավորված անձին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման արժեքն է (դրամ),

ՀՕԱ-ն Համակարգի օպերատորի կողմից Լիցենզավորված անձին էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման արժեքն է (դրամ),

ՇՕԱ-ն էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձի կողմից Լիցենզավորված անձին էլեկտրաէներգետիկական

շուկայի օպերատորի ծառայության մատուցման արժեքն է (դրամ):

Սույն կետում նշված ԱԱ$_1$, ԱԱ$_2$, ԻԱԱ, ՆԷԱ և ՀԱ մեծությունները որոշվում են Հանձնաժողովի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների պահանջներին համապատասխան Համակարգի օպերատորի կազմած և Հանձնաժողով ներկայացրած Տարեկան հաշվեկշռի հիման վրա:

3. Շահագործման և պահպանման ծախսերում (ՇՊԾ) ներառվում են Հանձնաժողովի կողմից թույլատրված հաշվարկային տարվա ընթացքում կատարվող ընթացիկ ծախսերը, որոնք հիմնավորված և անհրաժեշտ են Լիցենզավորված անձի բնականոն գործունեությունն ապահովելու համար, այդ թվում՝

1) նորոգման ծախսերը,
2) նյութական ծախսերը,
3) աշխատանքի վճարման ծախսերը,
4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերը (բացի շահութահարկից և ավելացված արժեքի հարկից), տուրքերը ու պարտադիր այլ վճարները,
5) Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի սպասարկման ծախսերը,
6) վարչական, կառավարման, իրացման և ընդհանուր բնույթի այլ ծախսերը:

Շահագործման և պահպանման ծախսերը որոշվում են ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի վերլուծության հիման վրա՝ հաշվի առնելով դրանց որոշման պահին հայտնի և կանխատեսվող ողջամիտ փոփոխությունները:

4. 2016 թվականից մինչև 2027 թվականը ներառյալ ժամանակահատվածում Սակագնային մարժայի վերանայումների ժամանակ՝

1) 2016 թվականից սկսած հնգամյա ժամանակահատվածի (այսուհետ՝ Հնգամյա ժամանակահատված)՝
   ա. յուրաքանչյուր հաշվարկային տարվա Սակագնային մարժայի վերանայման ժամանակ շահագործման և պահպանման ծախսերի տարեկան մեծությունը կընդունվի 2015 թվականի օգոստոսի 1-ից գործող սակագների հաշվարկներում նախատեսված մեծությանը հավասար (26772.96 միլիոն

դրամ, այդ թվում՝ նորոգման ծախսերը՝ 1592.51 միլիոն դրամ և նյութական ծախսերը՝ 2676.46 միլիոն դրամ)՝ միաժամանակ երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերերորդ հաշվարկային տարիների համար կատարելով նորոգման և նյութական ծախսերի ճշգրտում, որը հաշվի կառնի Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա սպառողական գների ինդեքսը՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ հրապարակված Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից.

բ. համար իրականացվող Ներդրումների ծավալը չպետք է գերազանցի աճողական 100 միլիարդ դրամը և յուրաքանչյուր տարվա համար՝ 25 միլիարդ դրամը.

գ. վերջին երեք տարիների՝ 2018 թվականից մինչև 2020 թվականը ներառյալ ժամանակահատվածի համար, ի լրումն սույն ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված Ներդրումների, Լիցենզավորված անձի կողմից իրականացնվող լրացուցիչ Ներդրումների ծավալը չպետք է գերազանցի աճողական 47 միլիարդ դրամը, որի վերադարձը Լիցենզավորված անձին՝ դրանց նկատմամբ հաշվարկվող մաշվածությունը (ամորտիզացիան) և շահույթը Սակագնային մարժայի հաշվարկներում ներառելու միջոցով, կիրականացվի 2021 թվականից սկսած.

2) 2021 թվականից սկսած քառամյա ժամանակահատվածի (այսուհետ՝ Քառամյա ժամանակահատված)՝

ա. առաջին հաշվարկային տարվա Սակագնային մարժայի վերանայման ժամանակ շահագործման և պահպանման ծախսերը կորոշվեն համաձայն սույն մեթոդիկայի 3-րդ կետի, ընդ որում, աշխատանքի վճարման ծախսերը որոշելիս աշխատողների թվաքանակը Սակագնային մարժայի հաշվարկում կներառվի փաստացի թվաքանակով, բայց 6706-ից ոչ ավելի, իսկ նորոգման և նյութական ծախսերը՝ Հնգամյա ժամանակահատվածի հինգերորդ հաշվարկային տարվա Սակագնային մարժայի հաշվարկներում ընդունված ծախսերի՝ սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ նշված սպառողական գների ինդեքսով ճշգրտված մեծության 70 տոկոսից ոչ ավելի չափով.

բ. երկրորդ, երրորդ և չորրորդ հաշվարկային տարիների Սակագնային մարժայի

վերանայումների ժամանակ շահագործման և պահպանման ծախսերի մեծությունը կընդունվի սույն ենթակետի «ա» պարբերության համաձայն որոշված մեծության չափով՝ կատարելով նորոգման և նյութական ծախսերի ճշգրտում, որը հաշվի կառնի Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա սպառողական գների ինդեքսը՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ հրապարակված Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից.

գ. համար իրականացվող Ներդրումների ծավալը չպետք է գերազանցի աճողական 118 միլիարդ դրամը.

3) 2025 թվականից սկսած եռամյա ժամանակահատվածի (այսուհետ՝ Եռամյա ժամանակահատված)՝

ա. առաջին հաշվարկային տարվա Սակագնային մարժայի վերանայման ժամանակ շահագործման և պահպանման ծախսերը կորոշվեն՝ համաձայն սույն մեթոդիկայի 3-րդ կետի, ընդ որում, աշխատանքի վճարման ծախսերը որոշելիս աշխատողների թվաքանակը Սակագնային մարժայի հաշվարկում կներառվի փաստացի թվաքանակով, բայց 6426-ից ոչ ավելի, իսկ նորոգման և նյութական ծախսերը՝ Քառամյա ժամանակահատվածի չորրորդ հաշվարկային տարվա Սակագնային մարժայի հաշվարկներում ընդունված ծախսերի՝ սույն կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նշված սպառողական գների ինդեքսով ճշգրտված մեծության 80 տոկոսից ոչ ավելի չափով և մնացած ծախսերը՝ Քառամյա ժամանակահատվածի չորրորդ հաշվարկային տարվա Սակագնային մարժայի հաշվարկներում ընդունված մեծության 90 տոկոսից ոչ ավելի չափով.

բ. երկրորդ և երրորդ հաշվարկային տարիների Սակագնային մարժայի վերանայումների ժամանակ շահագործման և պահպանման ծախսերի մեծությունը կընդունվի սույն ենթակետի «ա» պարբերության համաձայն որոշված մեծության չափով՝ կատարելով նորոգման և նյութական ծախսերի ճշգրտում, որը հաշվի կառնի Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա սպառողական գների ինդեքսը՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ հրապարակված Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական

ծառայության կողմից.

գ. համար իրականացվող Ներդրումների ծավալը չպետք է գերազանցի աճողական 85 միլիարդ դրամը.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության արդյունքում Լիցենզավորված անձի համար շահագործման և պահպանման ծախսերի ավելացման կամ նվազեցման անհրաժեշտություն առաջանալու դեպքում, եթե այդ փոփոխությունը կգերազանցի որևէ տարում 100 մլն դրամը կամ երկու և ավելի տարիների համար աճողական 200 մլն դրամը (առանց հաշվի առնելու նախկինում փոխհատուցված տարեկան մեծությունը), այն կավելացվի շահագործման և պահպանման ծախսերին կամ կնվազեցվի այդ ծախսերից:

4.1. Եռամյա ժամանակահատվածի ավարտից հետո Սակագնային մարժայի վերանայումների ժամանակ շահագործման և պահպանման ծախսերը կորոշվեն համաձայն սույն մեթոդիկայի 3-րդ կետի, ընդ որում, աշխատանքի վճարման ծախսերը որոշելիս աշխատողների թվաքանակը Սակագնային մարժայի հաշվարկում կներառվի փաստացի թվաքանակով, բայց 6146-ից ոչ ավելի, իսկ նորոգման և նյութական ծախսերը՝ Եռամյա ժամանակահատվածի երրորդ հաշվարկային տարվա Սակագնային մարժայի հաշվարկներում ընդունված ծախսերի՝ սույն մեթոդիկայի 4-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նշված սպառողական գների ինդեքսով ճշգրտված մեծության 85 տոկոսից ոչ ավելի չափով և մնացած ծախսերը՝ Եռամյա ժամանակահատվածի երրորդ հաշվարկային տարվա Սակագնային մարժայի հաշվարկներում ընդունված մեծության 90 տոկոսից ոչ ավելի չափով:

4.2. Սույն մեթոդիկայի 4-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի «գ» պարբերություններում նշված՝ 2018 թվականից մինչև 2027 թվականը ներառյալ ժամանակահատվածի Ներդրումների ծավալները տարիների միջև կարող են տեղափոխվել՝ պահպանելով Ներդրումների գումարային մեծությունը:

4.3. 2021 թվականից սկսած՝ սույն մեթոդիկայի 5-րդ, 8-12-րդ կետերի համաձայն հաշվարկվող և յուրաքանչյուր հաշվարկային տարվա Սակագնային մարժայի հաշվարկում ներառվող հիմնական միջոցների մաշվածության (ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի) և թույլատրելի շահույթի գումարային տարեկան մեծությունը չպետք է գերազանցի 82 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված մեծությունը: Միևնույն ժամանակ՝

1) սույն կետում նշված 82 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված շեմը Սակագնային մարժայի՝

ա. 2025 թվականի վերանայման ժամանակ ավելացվում է 2024 և 2025 թվականների Սակագնային մարժաների վերանայումների ժամանակ հաշվարկներում ներառվող աշխատողների թվաքանակների տարբերության և 2025 թվականի Սակագնային մարժայի հաշվարկներում ներառվող միջին տարեկան աշխատավարձի արտադրյալի, 2024 և 2025 թվականների Սակագնային մարժաների վերանայումների ժամանակ հաշվարկներում ներառվող նորոգման և նյութական ծախսերի (սպառողական գների ինդեքսով ճշգրտված) և մնացած ծախսերի տարբերությունների հանրագումարի չափով.

բ. 2028 թվականի վերանայման ժամանակ ավելացվում է 2027 և 2028 թվականների Սակագնային մարժաների վերանայումների ժամանակ հաշվարկներում ներառվող աշխատողների թվաքանակների տարբերության և 2028 թվականի Սակագնային մարժայի հաշվարկներում ներառվող միջին տարեկան աշխատավարձի արտադրյալի, 2027 և 2028 թվականների Սակագնային մարժաների վերանայումների ժամանակ հաշվարկներում ներառվող նորոգման և նյութական ծախսերի (սպառողական գների ինդեքսով ճշգրտված) և մնացած ծախսերի տարբերությունների հանրագումարի չափով.

2) որևէ հաշվարկային տարում Սակագնային մարժայի հաշվարկում ներառվող հիմնական միջոցների մաշվածության (ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի) և թույլատրելի շահույթի գումարային տարեկան մեծությունը սույն կետում նշված 82 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված շեմը (վերանայված՝ 2025 և 2028 թվականներին) գերազանցելու դեպքում Հանձնաժողովի կողմից ընդունված ներդրումների ծավալը նվազեցվում է համապատասխան չափով, որն այնուհետև հաշվի է առնվում Սակագնային մարժայի հաջորդ տարիների վերանայումների ժամանակ՝ պահպանելով սույն կետում ամրագրված պայմանները:

5. Հիմնական միջոցների մաշվածությունը և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան (Մ) հաշվարկվում է գծային եղանակով: Ներդրումների հաշվին ստեղծված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեքի նկատմամբ կիրառվում է 4 տոկոս մաշվածության նորմա: Ներդրումների իրականացման համար ներգրավված փոխառու միջոցների վերադարձի ժամկետում Լիցենզավորված անձի

վճարունակության ապահովման նպատակով կարող է կիրառվել ավելի բարձր մաշվածության նորմա, սակայն ոչ ավելի, քան տարեկան 8 տոկոսը:

6. Ներդրումների հաշվին ստեղծված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեքներն ամրագրվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

7. Անհուսալի դեբիտորական պարտքերը (ԱԴՊ), որոնք Լիցենզավորված անձի կողմից Սպառողներին (Բաժանորդներին) առաքված էլեկտրական էներգիայի դիմաց ձևավորված, սակայն սահմանված ժամկետներում չվճարված և Լիցենզավորված անձի հաշվեկշռից դուրս գրված պարտքերն են, ներառվում են անհրաժեշտ հասույթի կազմում, բայց ոչ ավելի, քան առաքվող էլեկտրական էներգիայի արժեքի 1 տոկոսի չափով:

8. Թույլատրելի շահույթը (ԹՇ) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\textbf{ԹՇ} = \textbf{ՇԲ} * \textbf{ՇՆ}/100,$$

որտեղ՝

ՇԲ-ն շահույթի հաշվարկման բազան է (դրամ),

ՇՆ-ն ակտիվների շահութաբերության նորման է մինչև հարկումը (%):

9. Շահույթի հաշվարկման բազան որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\textbf{ՇԲ} = \textbf{ՆԱ} - \textbf{ԿՄԱ} + \textbf{ՇԿ},$$

որտեղ՝

ՆԱ-ն Սակագնային մարժայի վերանայման տարվան նախորդող տարիներին Ներդրումների հաշվին ստեղծված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեքն է (դրամ),

ԿՄԱ-ն Սակագնային մարժայի վերանայման տարվան նախորդող տարիներին Ներդրումների հաշվին ստեղծված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների կուտակված մաշվածությունն ու ամորտիզացիան է (դրամ),

ՇԿ-ն շրջանառու կապիտալի մեծությունն է (դրամ):

Շահույթի հաշվարկման բազայում չեն ընդգրկվում այն Ներդրումները, որոնք իրականացվում են դրամաշնորհների կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունից, կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի հաշվին:

10. Շրջանառու կապիտալի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\textbf{ՇԿ} = (\textbf{ԱՀ} - \textbf{ԳԷԱ} + \textbf{ՇՊԾ}) * 30 / 365,$$

որտեղ՝

ՇՊԾ-ն շահագործման և պահպանման ծախսերն են՝ չներառելով Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի սպասարկման ծախսերը:

11. Հանձնաժողովն ակտիվների շահութաբերության նորման սահմանում է՝ ելնելով Հայաստանի Հանրապետությունում ռիսկի նույն մակարդակով գործող ընկերությունների շահութաբերության վերլուծությունից, բայց ոչ պակաս, քան 12 տոկոսը (հարկումից հետո):

12. Նպատակային ծրագրերի իրականացման համար Լիցենզավորված անձի կողմից արտարժույթով ներգրավված վարկերի հաշվին կատարված Ներդրումները Սակագնային մարժայի հաշվարկում կարող են ամրագրվել տվյալ արտարժույթով և արտահայտվել Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ Սակագնային մարժայի հաշվարկում ներառվող արտարժույթի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքով: Այդ Ներդրումների համար իրականացվում է առանձին հաշվառում: Սույն կետով նախատեսված Ներդրումների հաշվին ստեղծված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մնացորդային արժեքի նկատմամբ կիրառվում է շահութաբերության նորմա՝ ոչ պակաս, քան 10 տոկոս (հարկումից հետո):

13. Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի և գնված էլեկտրական էներգիայի արժեքի տարբերության հաշվարկային և փաստացի մեծությունների շեղման արդյունքում ձևավորված փոխհատուցման ենթակա գումարը (ՓԳ) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՓԳ} = (\text{Մ}_{\text{հ}} - \text{Մ}_{\text{փ}})*(1 + \text{S}/100)\ ,$$

որտեղ՝

$\text{Մ}_{\text{հ}}$-ն Սակագնային մարժայի վերանայմանը նախորդող տարվա ապրիլի 1-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածի համար Լիցենզավորված անձի հաշվարկային անհրաժեշտ հասույթի (ներառյալ բաշխման ծառայությունից ստացված հասույթը) և գնված էլեկտրական էներգիայի արժեքի տարբերությունն է (դրամ),

$\text{Մ}_{\text{փ}}$-ն Սակագնային մարժայի վերանայմանը նախորդող տարվա ապրիլի 1-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածի համար Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի (ներառյալ բաշխման ծառայությունից ստացված հասույթը) և գնված էլեկտրական էներգիայի արժեքի՝ փաստացի տվյալներով ձևավորված

տարբերությունն է (դրամ), որը որոշվում է սույն մեթոդիկայի 14-17-րդ կետերի համաձայն,

S-ն փոխհատուցման ենթակա գումարի վրա կիրառվող տոկոսադրույքն է, որն ընդունվում է հավասար 12 տոկոս:

14. Փաստացի տվյալներով ձևավորված հասույթի և գնված էլեկտրական էներգիայի արժեքի տարբերությունը (**Մ**$_{Φ}$) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathbf{Մ_{Φ} = Մ_{Φ1} + Մ_{Φ2} + Մ_{Φ3}}\ \mathbf{:}$$

15. **Մ**$_{Φ1}$ մեծությունը որոշվում է Սակագնային մարժայի վերանայմանը նախորդող տարվա ապրիլի 1-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածի այն ամիսների համար, որոնց վերաբերյալ առկա են փաստացի տվյալներ, հետևյալ բանաձևով՝

$$Մ_{Φ1} = Հ_{Φ1} - \left(Է_{կվտժ1} + ԲԷՑ_{1}\right) * \frac{(1 - Կ_{բցΦ1}/100)}{(1 - Կ_{բցՀ}/100)} - Է_{Հq1} - Ծ_{Φ1} - ΔՇ_{1}\ ,$$

որտեղ՝

Հ$_{Φ1}$**-ը** Լիցենզավորված անձի կողմից էլեկտրական էներգիայի վաճառքից և էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցումից ձևավորված փաստացի հասույթն է (դրամ),

Է$_{կվտժ1}$**-ը** Արտադրողներից, Ներկրողներից փաստացի գնված, Լիցենզավորված անձի կողմից փաստացի ներկրված էլեկտրական էներգիայի և *Ինքնավար արտադրողների* ու Լիցենզավորված անձի միջև իրականացվող էլեկտրական էներգիայի փոխհոսքերի շրջանակում *Լիցենզավորված անձի* կողմից Ինքնավար արտադրողներին փաստացի տրամադրված հատուցման արժեքն է (դրամ),

ԲԷՑ$_{1}$**-ը** էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման արժեքն է (դրամ),

Կ$_{բցΦ1}$**-ը** Բաշխիչ ցանց մուտք գործած էլեկտրական էներգիայի նկատմամբ փաստացի ձևավորված կորուստի մեծությունն է (%),

Կ$_{բցՀ}$**-ն** հաշվարկային տարվան նախորդող հաշվարկային տարվա համար Բաշխիչ ցանց մուտք գործող էլեկտրական էներգիայի նկատմամբ Սակագնային մարժայի հաշվարկում ընդունված կորուստի մեծությունն է (%),

Է$_{Հq1}$**-ը** Արտադրողներից փաստացի գնված էլեկտրական հզորության արժեքն է (դրամ),

Ծ$_{Φ1}$**-ը** էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման, ինչպես նաև հարևան երկրների հետ էլեկտրական էներգիայի փոխհոսքեր իրականացնող անձի ծախսերի փոխհատուցման փաստացի արժեքն է (դրամ),

ΔՇ$_{1}$**-ը** օրենքով սահմանված դեպքում Սևանա լճից բաց թողնվող ջրի՝ տարեկան 170

միլիոն խորանարդ մետրը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի ձեռքբերման արդյունքում Լիցենզավորված անձի մոտ առաջացող և վճարման ենթակա լրացուցիչ շահույթն է (դրամ), որի հաշվարկման և վճարման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

16. $\mathbf{M}_{\Phi 2}$ մեծությունը որոշվում է որպես հաշվարկային անհրաժեշտ հասույթի (ներառյալ բաշխման ծառայությունից ստացված հասույթը) և գնված էլեկտրական էներգիայի արժեքի տարբերություն՝ Սակագնային մարժայի վերանայմանը նախորդող տարվա ապրիլի 1-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածի այն ամիսների համար, որոնց վերաբերյալ առկա չեն փաստացի տվյալներ:

17. $\mathbf{M}_{\Phi 3}$ մեծությունը որոշվում է որպես Սակագնային մարժայի վերանայման պահին գործող սակագների հաշվարկներում ներառված $\mathbf{M}_{\Phi 2}$-ի՝ փաստացի տվյալների հիման վրա ճշգրտված մեծության և նույն սակագների հաշվարկներում ներառված $\mathbf{M}_{\Phi 2}$-ի տարբերություն:

18. Սակագնային մարժայի հաշվարկում ներառվող էլեկտրական էներգիայի թույլատրելի կորուստները բաղկացած են Բաշխիչ ցանցում և Հաղորդման ցանցում առաջացող թույլատրելի կորուստներից:

19. Սակագնային մարժայի հաշվարկում ներառվող՝ Բաշխիչ ցանց մուտք գործող էլեկտրական էներգիայի նկատմամբ Բաշխիչ ցանցում թույլատրելի կորուստների մեծությունը կհաշվարկվի Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Տեխնոլոգիական կորուստների հաշվարկման մեթոդիկայի համաձայն: Տարեկան կտրվածքով հաշվարկված հաշվարկային կորուստները, որպես տեխնիկական կորուստների և հաշվառքի սարքերի սխալանքով պայմանավորված առևտրային կորուստների գումար, կներառվեն Սակագնային մարժայի հաշվարկում: Այլ բնույթի առևտրային կորուստները Սակագնային մարժայի հաշվարկում կներառվեն լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների, ինչպես նաև կորուստների նվազեցմանն ուղղված Լիցենզավորված անձի ծրագրերի (այդ թվում՝ ներդրումային) իրականացման արդյունքների ուսումնասիրությունից ելնելով: Սակայն, ամեն դեպքում այն Սակագնային մարժայի հաշվարկում կներառվի գնվող էլեկտրական էներգիայի 1 տոկոսից ոչ պակաս չափով և ոչ ավելի, քան նախորդ տարվա փաստացի կորուստների և հաշվարկային Տեխնոլոգիական կորուստների տարբերության չափով:

20. Յուրաքանչյուր հաշվարկային տարում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստի մեծությունը ներկայացվում է Համակարգի օպերատորի կողմից՝

հաշվի առնելով հաշվարկային տարում էլեկտրական էներգիայի կանխատեսվող արտադրության և առաքման հաշվեկշիռը:

21. Սակագնային մարժայի հաշվարկում ներառվող Բաշխիչ ցանցում էլեկտրական էներգիայի թույլատրելի կորուստների մեծությունը՝

1) Հնգամյա ժամանակահատվածի համար կընդունվի 11.03 տոկոս.

2) 2021 թվականին Սակագնային մարժայի վերանայման ժամանակ կորոշվի՝ համաձայն սույն մեթոդիկայի 19-րդ կետի, և Քառամյա ժամանակահատվածի համար կմնա անփոփոխ, որը սակայն չպետք է գերազանցի 7,5 տոկոսը.

3) 2025 թվականին Սակագնային մարժայի վերանայման ժամանակ կորոշվի՝ համաձայն սույն մեթոդիկայի 19-րդ կետի, և Եռամյա ժամանակահատվածի համար կմնա անփոփոխ, որը սակայն չպետք է գերազանցի 7 տոկոսը.

4) 2028 թվականին Սակագնային մարժայի վերանայման ժամանակ և հետագա տարիներին կորոշվի՝ համաձայն սույն մեթոդիկայի 19-րդ կետի, որը սակայն չպետք է գերազանցի 6,4 տոկոսը:

22. Սակագնային մարժան որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՍՄ} = \frac{\text{ԱՀ} - \text{ԱԻՀ}}{\text{ՆԻ}} - \text{ԷԳՄՍ},$$

որտեղ՝

ՍՄ-ն Սակագնային մարժան է (դրամ/կՎտժ),

ԱԻՀ-ն Լիցենզավորված անձի կողմից էլեկտրական էներգիայի այլ իրացումից հասույթն է (դրամ),

ՆԻ-ն Լիցենզավորված անձի կողմից ներքին շուկայի սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի քանակն է (կՎտժ), որը որոշվում է Հանձնաժողովի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների պահանջներին համապատասխան,

ԷԳՄՍ-ն Լիցենզավորված անձի կողմից էլեկտրական էներգիայի գնման միջին կշռութային սակագինն է (դրամ/կՎտժ):

23. Լիցենզավորված անձի կողմից էլեկտրական էներգիայի գնման միջին կշռութային սակագինը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ԷԳՄՍ} = \frac{\text{ԳԷԱ} - \text{ԱԻՀ}}{(\text{ՆԻ} + \text{ՍԿ})/(1 - \text{Կ}_{\text{ԲՑ}}/100)},$$

որտեղ՝

ՍԿ-ն Լիցենզավորված անձի կողմից սեփական և տնտեսական կարիքների

համար ծախսվող էլեկտրական էներգիայի քանակությունն է (կՎտժ),

$Կ_{ԲՑ}$-ն Բաշխիչ ցանց մուտք գործող էլեկտրական էներգիայի նկատմամբ Բաշխիչ ցանցում թույլատրելի կորուստի մեծությունն է (%):»: